Research Center
«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն
ՀՀ, Երեւան 0051, Հովսեփ Էմինի 123
Հեռ.՝ +37410 219740
Էլ-փոստ՝ info@ev.am
www.ev.am

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն

Երևան, մայիսի 23, 2012թ.

Մամլո հաղորդագրություն

Հայաստանը 59-րդն է 132 երկրների շարքում 2012թ. Համաշխարհային առևտրի խթանման ցուցիչով

Համաշխարհային տնտեսական ֆորումը (ՀՏՖ) 2012 թվականին իրականացրել է Համաշխարհային առևտրի խթանման հերթական համեմատական վերլուծությունը 132 երկրների կտրվածքով: «Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը, որպես ՀՏՖ-ի Համաշխարհային մրցունակության ցանցի գործընկեր կազմակերպություն ներկայացնում է 2012թ. զեկույցի ամփոփ տվյալները:

Զեկույցի նպատակն է վերլուծել առևտրի խթանմանն ուղղված քաղաքականությունները և դրանց արդյունավետությունը տարբեր երկրներում:

Համաշխարհային առևտրի խթանման ցուցիչը հաշվարկվում է առևտրի հոսքերի ազատությունը պայմանավորող գործոնները և քաղաքականությունները նկարագրող 4 հիմնական ոլորտների ենթահամաթվերի հիման վրա, որոնք ներկայացված են ստորև.

ա) շուկայի մուտքի ենթահամաթիվ, որ նկարագրում է, թե որքանով է երկրի արտաքին առևտրի ոլորտը կարգավորող օրենսդրական դաշտը խրախուսում օտարերկրյա ապրանքատեսակների շրջանառությունը ներքին շուկայում և նպաստում արտասահմանյան շուկաներում տեղի արտադրողների ազատ մուտքին;

բ) սահմաններում կարգավորման ենթահամաթիվ, որ ներկայացնում է թե որքանով են այս ոլորտում կիրարկվող մեխանիզմները նպաստում ապրանքների արդյունավետ հոսքին;

գ) տրանսպորտի և հեռահաղորդակցության ենթակառուցվածքի ենթահամաթիվ, որ գնահատում է, թե որքանով է վերջինս ապահովում բեռնափոխադրումների ոլորտի արդյունավետ գործունեությունը երկրի ներսում և դրանից դուրս;

դ) գործարար միջավայրի համաթիվ, որն անդրադառնում է վարչարարության որակին, ֆիզիկական ապահովության և ոլորտը կարգավորող դաշտի ազդեցությունը արտահանողների և ներմուծողների վրա:

Համաձայն զեկույցի՝ Հայաստանը միջին դիրքեր է գրավում ապրանքների ազատ հոսքերի խթանման ունակությամբ: Ոլորտում կրկին լավագույն կատարողականն են գրանցել Սինգապուրը և Հոնկոնգը:

2012 թվականի վերլուծության արդյունքներով Հայաստանը առևտրի խթանման ամփոփ ցուցիչով գրավել է 59-րդ տեղը 132 երկրների շարքում: Ինչպես և նախորդ տարիներին, այս ցուցանիշով Հայաստանը գերազանցում է զեկույցում ներառված ԱՊՀ երկրների ցուցանիշները՝ Մոլդովային (76), Ադրբեջանին (88), Ուկրաինային (86), Ղազախստանին (105), Տաջիկստանին (110), Ղրղզստանին (111) և Ռուսաստանին (112): Վրաստանը առևտրի խթանման կատարողականով 38-րդն է:

Համաշխարհային առևտրի խթանման ցուցիչի ենթացուցիչները

Ենթացուցիչներ	**2012 դիրքը**	**2012 միավորը (1-7)**
Ծուկայի մուտքը	13	4.9
Սահմանային վարչարարությունը	85	3.5
Տրանսպորտի և հեռահաղորդակցության ենթակառուցվածքը	63	3.9
Գործարար միջավայրը	61	4.4

Ընդհանուր առմամբ, համաշխարհային առևտրի խթանման ասպարեզում Հայաստանի համար հիմնական խնդրահարույց գործոնը սահմանային վարչարարությունն է: Ծուկայի մուտքի ցուցանիշով Հայաստանը բավականին մրցունակ դիրքում է ուսումնասիրվող երկրների շարքում:

Համաձայն ՀՏՖ գնահատականների՝ Հայաստանի առևտրի խթանման համակարգում լավագույն և վատագույն կատարողականն են գրանցել հետևյալ գործոնները.

Գործոն	**Դիրքը**	**Գործոն**	**Դիրքը**
Տրանսպորտի ոլորտում Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի(GATS) իրականացումը, համաթիվ (0-1)	14	Մաքսային կարգավորումների բեռը	122
Ահաբեկչության ազդեցությունը գործարար ծախքերի վրա	16	Ներմուծման ծախքերը, $ մեկ բեռնարկղի հաշվով	111
Նպատակային շուկաներում նպաստավոր խտրական մաքսային դրույքներ, համաթիվ (0-100)	20	Տեղական մրցակցություն	110
Հանցագործությունների ազդեցությունը բիզնես ծախքերի վրա	23	Արտահանման ծախքերը, $ մեկ բեռնարկղի հաշվով	109
Մաքսազերծ ներմուծումների մասնաբաժինը, %	27	Մաքսազերծման գործընթացների արդյունավետություն (1-5)	107
Հարթված ճանապարհներ, % ընդհանուրից	28	Բիզնեսի կողմից ինտերնետի օգտագործումը	105
Արտահանման համար անհրաժեշտ փաստաթղթերի քանակ	29	Բեռնափոխադրումների ոլորտի մրցունակությունը	105
Բջջային կապի բաժանորդներ, 100 շնչի հաշվով	30	Կոռուպցիայի ընկալման ինդեքս (0-10)	104
Մաքսային դրույքաչափ, %	34	Կառավարության առցանց ծառայությունների ինդեքս (0-1)	102
Մաքսային ծառայությունների ինդեքս (0-12)	39	Ֆինանսական շուկայի արդյունավետությունը	100

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոն (EV)

«Տնտեսություն և արժեքներ»-ը մրցունակությունն ուսումնասիրող մտավոր կենտրոն է, որը ձգտում է ներմուծել զարգացման նոր հայեցակարգեր բարձրակարգ միջազգային կապերի, լավագույն որակավորում ունեցող վերլուծաբանների եւ խորհրդատուների ցանցի միջոցով:

«Տնտեսություն և արժեքներ» հետազոտական կենտրոնը հանդիսանում է «Ի-Վի Քոնսալթինգ» ՓԲԸ հետազոտական թևը: Ի-Վի Քոնսալթինգ խորհրդատվական ընկերությունը գործարար խորհրդատվական և ֆինանսական միջնորդի ծառայություններ է մատուցում նորարարության և մրցունակության ձգտող կազմակերպություններին:

Հովսեփ Էմին 123
Երևան-0051
Հեռ. +374 10 21 97 40
info@ev.am,
www.ev.am, www.evconsulting.am